ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզ
Այգավան համայնք, հեռ. 0234-6-00-89 aygavan1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հունվարի 2017 թվականի N 1

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել Այգավան համայնքի ավագանու նիստի օրակարգը հետևյալ հերթականությամբ՝

1.Այգավան համայնքի 2017թ-ի ֆոնդային բյուջեն հաստատելու մասին:

/Զեկ. Լ.Սահակյան/

2.<<Ժպիտ>> մանկապարտեզի աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի հաստատում:

/Զեկ. Վ.Հարությունյան/

3.Այգավան համայնքի վարչական բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

/Զեկ. Լ.Սահակյան/

4.Համայնքի 2016թ-ի տարեկան բյուջեի եկամուտների կատարողականի հաղորդում:

/Զեկ. Լ.Սահակյան/

5.Այգավան համայնքի 2017-2021թթ-ի սոցիալ-տնտեսական զարգացման հնգամյա ծրագրի հաստատում: /Զեկ. Վ.Հարությունյան/

6.Այգավան համայնքի 2017թ-ի տեղական տուրքերի և վճարների մասին:

/Զեկ. Մ.Դավթյան/

Կողմ – 9 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԷԼՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԵՂԱՄ
3. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԱՄ
4. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԱ

5.ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ

6.ԿՈՍՏԱՆՅԱՆ ՄԱԳԴԱ

7.ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՍ

8. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ

9. ԶԱՔԱՐՅԱՆ ԱՐԵՎՇԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԻԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ.տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզ
Այգավան համայնք, հեռ. 0234-6-00-89 aygavan1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հունվարի 2017 թվականի N 2-Ն

ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ-Ի ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել համայնքի 2017թ-ի ֆոնդային բյուջեն.

Եկամտային մաս՝

1.Վարչական բյուջեի ազատ մնացորդից մուտք ֆոնդային բյուջե՝ 3485984 դրամ

2.Ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը՝ 860.10 դրամ

Ընդամենը՝ 3486844.1 դրամ

Ծախսային մաս

1.Կառավարման ապարատ բաժին 01 01 01

Վարչական սարքավորումներ՝ 5122 հոդված՝ 600.0հազ.դրամ

Ընդամենը՝ 600.0 հազ.դրամ

2.Արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգում՝ շենքերի և շինությունների կառուցում՝

5112 հոդված՝ 990.0 հազ.դրամ

Ընդամենը՝ 990.0 հազ.դրամ

3.Կառավարման ապարատ բաժին 01 01 01 Տրանսպորտային սարքավորումներ՝

5121 հոդված՝ 390.0 հազ.դրամ

Ընդամենը՝ 390.0 հազ.դրամ

4.Մշակութային տների հիմնանորոգում 08 02 03

Վարչական սարքավորումներ՝ 5122 հոդված՝ 200.0 հազ.դրամ

Ընդամենը՝ 200.0 հազ.դրամ

5.Ասֆալտ բետոնյա ծածկի նորոգում 04-05-01 5113 հոդված՝ 990.0 հազ.դրամ

Ընդամենը՝ 990.0 հազ դրամ

6.Ասֆալտ բետոնյա ծածկի նորոգում 04-05-01 5221 հոդված նյութեր և պարագաներ, երկաթգանցի անցումից առաջ տեղակայվող ճանապարհային անվտանգության նշաններ, բնակավայրի սկիզբ և բնակավայրի վերջ ազդարարող նշաններ՝ 316844.1 հազ.դրամ

Ընդամենը՝ 316844.1 հազ.դրամ:

Կողմ – 9 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԷԼՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԵՂԱՄ
3. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԱՄ
4. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԱ
5.ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ
6.ԿՈՍՏԱՆՅԱՆ ՄԱԳԴԱ
7.ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՍ
8. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
9. ԶԱՔԱՐՅԱՆ ԱՐԵՎՇԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԻԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

կ.տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզ
Այգավան համայնք, հեռ. 0234-6-00-89 aygavan1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հունվարի 2017 թվականի N 3

<<ԺՊԻՏ>> ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել <<Ժպիտ>> մանկապարտեզի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը:

Կողմ – 9 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԷԼՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԵՂԱՄ
3. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԱՄ
4. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԱ
5. ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ
6. ԿՈՍՏԱՆՅԱՆ ՄԱԳԴԱ
7. ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՍ
8. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
9. ԶԱՔԱՐՅԱՆ ԱՐԵՎՇԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԻԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

կ.տ.

ՀԱՅԳԱՎԱՆ ԳՅՈՒՂԻ << ԺՊԻՏ >> ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ-ի ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների թվաքանակը - 27

2.Աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

	Պաշտոնը	Դրույք	Աշխատա վարձի չափը
1	Տնօրեն	1	150000
2	Մանկավարժ	0.5	56657
3	պարուսույց ֆիզ.դաստ	0.5 +0.5	113314
4	Դաշնակահար	1	113315
5	Դաստիարակչուհի	5	538472
6	Էլեկտրիկ+ օժանդակ բանվոր	05+0.5	72752
7	Դաստ.օգնական	4	296160
8	Բուժքույր	1	76000
9	Տնտեսվար	1	76000
10	Հաշվապահ	1	105000
11	Գանձապահ	1	72752
12	Խոհարար	2	145504
13	Լվացարար	1	72752
14	Շենք և սարքավորումներ նորոգող բանվոր	0.5	36376
15	Պահակ	1	72752
	Ընդամենը	22	1997806

<<Ժպիտ>> մանկապարտեզի տնօրեն Լ. Թունյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզ
Այգավան համայնք, հեռ. 0234-6-00-89 aygavan1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հունվարի 2017 թվականի N4-Ն

ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասով և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Այգավան համայնքի վարչական բյուջեում կատարել փոփոխություն.

1.Եկամտային մաս

Վարչական բյուջեի եկամտային մասում գազի բացօթյա վաճառքի թույլտվության 350.0 հազար դրամի փոխարեն սահմանել 400.0 հազար դրամ:

Վարչական բյուջեն սահմանել 91.436218:

2.Ծախսային մաս

Պահուստային ֆոնդ 4891 հոդվածին ավելացնել 50.0 հազար դրամ:

Պահուստային ֆոնդ սահմանել 7519.310 հազ. դրամ

Կողմ – 9 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԷԼՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԵՂԱՄ
3. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԱՄ
4. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԱ
5.ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ
6.ԿՈՍՏԱՆՅԱՆ ՄԱԳԴԱ

7.ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՍ

8. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ

9. ԶԱՔԱՐՅԱՆ ԱՐԵՎՇԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԻԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

կ.տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզ
Այգավան համայնք, հեռ. 0234-6-00-89 aygavan1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հունվարի 2017 թվականի N 5-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ 2016Թ-Ի ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՂՈՐԴՈՒՄ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Ընդունել գիտություն համայնքի 2016թ-ի բյուջեի եկամուտների կատարողականը հետևյալ կերպ.

Եկամտատեսակ	Տարվա ճշտված պլանը (հազ.դրամ)	Դեկտեմբերի կատարողականը (հազ.դրամ)	Փաստացին պլանի նկատմամբ
Հողի հարկ	15200.0	12757.927	83.94%
Գույքահարկ փոխադրամիջոցներ	6987.0	7719.163	110.48%
Գույքահարկ շենք շինություն	270.0	281.469	104.25%
Հողի վարձավճար	1050.5	1062.347	101.13%
Այլ ոչ հարկային եկամուտներ	300.0	300.100	100.03%
Ծխախոտի, խմիչքների վաճառքի թույլտվություն,տեխնիկական հեղ.հեղուկ գազեր	610.0	434.100	71.16%
Ընդամենը	24417.500	22555.106	92.38%

Կողմ – 9 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԷԼՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԵՂԱՄ
3. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԱՄ
4. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԱ
5.ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ
6.ԿՈՍՏԱՆՅԱՆ ՄԱԳԴԱ
7.ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՍ
8. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
9. ԶԱՔԱՐՅԱՆ ԱՐԵՎՇԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԻԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

կ.տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզ
Այգավան համայնք, հեռ. 0234-6-00-89 aygavan1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հունվարի 2017 թվականի N6-Ն

- ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021ԹԹ-Ի ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ կետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել Այգավան համայնքի 2017-2021թթ սոցիալ-տնտեսական զարգացման հնգամյա ծրագիրը համաձայն հավելված 1-ի /առդիր 32 էջ/:

Կողմ – 9 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԷԼՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԵՂԱՄ
3. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԱՄ
4. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԱ
5. ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ
6. ԿՈՍՏԱՆՅԱՆ ՄԱԳԴԱ
7. ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՍ
8. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
9. ՋԱՔԱՐՅԱՆ ԱՐԵՎՇԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԻԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

կ.տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզ
Այգավան համայնք, հեռ. 0234-6-00-89 aygavan1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հունվարի 2017 թվականի N 7-Ն

ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ-Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետով, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12 և 14-րդ հոդվածներով, ինչպես նաև <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72 հոդվածով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

1.Հաստատել Այգավան համայնքում 2017թ-ի համար սահմանված տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի:
2.Անվավեր ճանաչել Այգավան համայնքի 2016թ-ի նոյեմբերի 15-ին կայացած ավագանու թիվ 27-Ն որոշման հավելվածը և 2016թ-ի դեկտեմբերի 21-ին կայացած ավագանու թիվ 35-Ն որոշումը:

Կողմ – 9 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԷԼՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԵՂԱՄ
3. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԱՄ
4. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԱ
5.ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ
6.ԿՈՍՏԱՆՅԱՆ ՄԱԳԴԱ
7.ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՍ
8. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
9. ԶԱՔԱՐՅԱՆ ԱՐԵՎՇԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԻԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ.Տ.

Հավելված թիվ 2
ՀՀ Արարատի մարզի Այգավան
համայնքի ավագանու 2017 թվականի
հունվարի 19-ի թիվ 7-Ն որոշման

ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 Թ-Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԸ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԸ

2017թ-ի համար սահմանել հետևյալ տեղական տուրքերի և վճարների դրույքաչափեր.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ,կիրառել 0.5 գործակիցը:

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեսուն հազար դրամ,կիրառել 0.5 գործակիցը:
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ, կիրառել 0.5 գործակիցը:
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ, կիրառել 0.5 գործակիցը:
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հարյուր հազար դրամ. կիրառել 0.5 գործակիցը:

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեք հազար դրամ, կիրառել 0.5 գործակիցը:
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հինգ հազար դրամ. կիրառել 0.5 գործակիցը:

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ երեք հազար դրամ, կիրառել 0.5 գործակիցը:

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ հինգ հազար դրամ,. կիրառել 0.5 գործակիցը:

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ վաթսուն հազար դրամ., կիրառել 0.5 գործակիցը:

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ., կիրառել 0.5 գործակիցը:

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար դրամ, կիրառել 0.5 գործակիցը:

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տաս հազար երկու հարյուր դրամ, կիրառել 0.3 գործակիցը:

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար չորս հարյուր դրամ, կիրառել 0.3 գործակիցը:

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանմեկ հազար դրամ, կիրառել 0.3 գործակիցը:

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանվեց հազար դրամ, կիրառել 0.3 գործակիցը:

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունվեց հազար դրամ. կիրառել 0.5 գործակիցը:

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար դրամ, կիրառել 0.5 գործակիցը:

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար երկու հարյուր դրամ, կիրառել 0.3 գործակիցը:

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար չորս հարյուր դրամ, կիրառել 0.3 գործակիցը:

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանմեկ հազար դրամ, կիրառել 0.3 գործակիցը:

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանվեց հազար դրամ. կիրառել 0.3 գործակիցը:

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունվեց հազար դրամ. կիրառել 0.5 գործակիցը:

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ հիսուն հազար դրամ, կիրառել 0.5 գործակիցը:

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ հարյուր հազար դրամ, կիրառել 0.5 գործակիցը:

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ չորս հարյուր հազար դրամ, կիրառել 0.5 գործակիցը:

դ. խաղատների համար՝ մեկ միլիոն դրամ, կիրառել 0.75 գործակիցը:

ե. շահումով խաղերի համար՝ հինգ հարյուր հազար դրամ, կիրառել 0.5 գործակիցը:

զ. վիճակախաղերի համար՝ հարյուր քառասունվեց հազար յոթ հարյուր դրամ. կիրառել 0.75 գործակիցը:

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար դրամ, կիրառել 0.5 գործակիցը:

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ վեց հազար դրամ, կիրառել 0.5 գործակիցը:

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնմեկ հազար դրամ, կիրառել 0.5 գործակիցը:

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնվեց հազար դրամ, կիրառել 0.5 գործակիցը:

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսանչորս հազար դրամ, կիրառել 0.5 գործակիցը:

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեսուներկու հազար դրամ. կիրառել 0.5 գործակիցը:

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար մեկ դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար մեկ դրամ,կիրառել 0.5 գործակիցը:

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար մեկ դրամից մինչև չորս հազար մեկ դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար մեկ դրամից մինչև ութ հազար մեկ դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ութ հազար մեկ դրամից մինչև տասնհինգ հազար մեկ դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար մեկ դրամից մինչև քսանհինգ հազար մեկ դրամ.

11) համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար դրամ, կիրառել 0.75 գործակիցը:

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար հինգ հարյուր դրամ, կիրառել 0.75 գործակիցը:

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր դրամ, կիրառել 0.3 գործակիցը:

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

12) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար հարյուր հազար դրամ. կիրառել 0.5 գործակիցը:

13) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ տաս հազար դրամ. կիրառել 0.5 գործակիցը:

14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հինգ հարյուր հազար դրամ. կիրառել 0.5 գործակիցը:

15) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ, կիրառել 0.5 գործակիցը:

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն դրամ, կիրառել 0.5 գործակիցը:

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ յոթ միլիոն դրամ, կիրառել 0.5 գործակիցը:

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ տաս միլիոն դրամ, կիրառել 0.5 գործակիցը:

2. Սույն հոդվածով սահմանված դրույքաչափերի համար կիրառվել են 0.3, 0.5, 0.75 գործակիցները, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասի:

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 10000 դրամ

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 10000 դրամ

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 15000դրամ

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5000դրամ

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 10000 դրամ

6) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ մինչև հազար դրամ փոխհատուցման վճար՝ 500դրամ

7) Օգտագործված կենցաղային ջրի համար տեղական վճարը սահմանել ամսական յուրաքանչյուր շնչից 30 դրամ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Մ.ԴԱՎԹՅԱՆ